Գործ թիվ ԵԴ/8494/02/23

ՀՀ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅՑԱԳԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

13.03.2023թ. **ք. Երևան**

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի /այսուհետ՝ Դատարան/ դատավոր Տ. Ստեփանյանս, ծանոթանալով <<ՋԻ ԷՄ ՊՐՈ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայցադիմումին և դրան կից ներկայացված փաստաթղթերին,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

<<ՋԻ ԷՄ ՊՐՈ>> ՍՊԸ-ն 06.03.2023թ. հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ <<Երևանի պետական համալսարան>> հիմնադրամի՝ թիվ ԵՊՀ-ԳՀԱՊՁԲ-23/3 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում Երևանի պետական համալսարան հիմնադրամի 2023թ փետրվարի 02-ի <<ՋԻ ԷՄ ՊՐՈ>> ՍՊԸ-ի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

07.03.2023թ. հայցադիմումը հանձնվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Տ. Ստեփանյանին:

Հայցադիմումը ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված պահանջների պահպանմամբ և նույն օրենսգրքի 126-րդ և 127-րդ հոդվածներով նախատեսված՝ հայցադիմումի ընդունումը մերժելու կամ հայցադիմումը վերադարձնելու հիմքեր չկան:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 125-րդ, 199-րդ, 200-րդ հոդվածներով,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

<<ՋԻ ԷՄ ՊՐՈ>> ՍՊԸ-ի ընդդեմ <<Երևանի պետական համալսարան>> հիմնադրամի՝ թիվ ԵՊՀ-ԳՀԱՊՁԲ-23/3 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում Երևանի պետական համալսարան հիմնադրամի 2023թ փետրվարի 02-ի <<ՋԻ ԷՄ ՊՐՈ>> ՍՊԸ-ի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, հայցադիմումն ընդունել վարույթ:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից:

ԴԱՏԱՎՈՐ **Տ. ՍՏԵՓԱՆՅԱՆ**